Մայայի արևաշող սուրբ գրությունը

Մայա Քրալ և Նոել Լամբերթ Բարուս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Սլովենիայում: Մայան նստել էր տան աստիճաններին և կզակը դրել ձեռքերի մեջ: Շողում էր պայծառ արևը՝ լույսի ջերմ ճառագայթները տարածելով բարձր ծառերի միջով: Օդում տարածվել էր սոճու թարմ ասեղների բույրը:

Մայրիկը դուրս եկավ և նստեց Մայայի կողքին: «Ի՞նչ ես մտածում»:

«Ես պետք է կիսվեմ իմ սիրելի սուրբ գրությամբ Երեխաների միությունում»,- ասաց Մայան: «Բայց ես չունեմ սիրելի հատված: Ու չգիտեմ, թե որ մեկն ընտրեմ»:

Մայրիկը գլխով արեց: «Սիրելի սուրբ գրություն ընտրելը դժվար է»: Նա նայեց ծառերին, ապա ոտքի կանգնեց: «Ես մի գաղափար ունեմ:



Մայրիկը տուն մտավ: Երբ նա վերադարձավ, իր հետ բերեց իր սուրբ գրությունները: «Արի սկսենք պատմությունից: Ո՞րն է քո սիրած պատմությունը սուրբ գրություններում»:

Մայան մտածեց այդ մասին: «Ինձ դուր է գալիս այն պատմությունը, երբ Հիսուսը այցելեց նեփիացիներին»:

Մայրիկը թերթեց Մորմոնի Գրքի էջերը: «Այդ պատմությունը սկսվում է 3 Նեփիից»: Նա մատնացույց արեց էջը: «Արի հերթով կարդանք և ընտրենք մեզ դուր եկած հատվածները»:

Մայան գլխով արեց և լսեց, թե ինչպես է մայրիկը կարդում: Նա կարդում էր այն մասին, թե Հիսուս Քրիստոսն ինչպես կանչեց Իր աշակերտներին: Նա կարդաց խաղաղարարների և աղոթքի մասին:

Այնուհետև Մայայի հերթն էր: Երբ ավարտեց հատվածներից մեկը, նա կանգ առավ: Նա այնպիսի զգացողություն ունեցավ՝ կարծես արևն այնքան պայծառ է շողում, որ լցնում է իր սիրտը:

Նա նայեց Մայրիկին: Ինձ դուր է գալիս այս հատվածը»:

«Ինձ նույնպես: Ի՞նչն է քեզ դուր գալիս այս հատվածում»,- հարցրեց Մայրիկը:

Մայան թոթվեց ուսերը, երբ դեմքին ժպիտ տարածվեց: «Այն Հիսուսի մասին է: Եվ դա ինձ ուղղակի երջանկացնում է»:

Ի պատասխան՝ մայրիկը ժպտաց: «Դա հրաշալի միջոց է իմանալու, որ դու գտար սիրելի սուրբ գրություն: Ուզո՞ւմ ես կիսվել այդ հատվածով Երեխաների միությունում»:

Մայան հուզված գլխով արեց: «Կօգնե՞ս ինձ սովորել այն»:

«Իհարկե»,- ասաց մայրիկը:

Մայրիկը և Մայան կրկնում էին բառ առ բառ: Մինչ նրանք աշխատում էին, թռչունները դայլայլում էին ծառերի վրա, կարծես նրանք նույնպես սովորում էին:

Ամբողջ շաբաթ Մայան շարունակ կրկնում էր սուրբ գրության իր սիրած հատվածը: Կիրակի առավոտյան նա մի փոքր անհանգիստ էր: Նա կրկնում էր սուրբ գրության իր հատվածը եկեղեցի գնալու երկար ճանապարհին:

Մայայի Երեխաների միությունում ընդամենը մի քանի երեխա կար: Բայց երբ մտավ դասարան, Մայան այնպիսի զգացողություն ունեցավ, ասես թիթեռնիկներ էին թռչում նրա փորիկում:

Երբ եկավ իր կիսվելու հերթը, Մայան կանգնեց և խոր շունչ քաշեց: «Ահա, ես եմ օրենքը, և լույսը»,- ասաց նա: «Նայեք ինձ, և համբերեք մինչև վերջ, և դուք կապրեք. քանզի նրան, որ համբերում է մինչև վերջ, ես հավերժական կյանք կտամ»:*

Երբ Մայան ավարտեց, նա նստեց ու ժպտաց: Նա արեց դա: Նյարդային թիթեռնիկներն անհետացան, և ջերմ, արևաշող զգացողությունը վերադարձավ: Նա գիտեր, որ սուրբ գրության իր սիրած հատվածը կբերեր այդ զգացումը, երբ դրա կարիքը զգար: ●

Այն սուրբ գրությունը, որ Մայան սովորեց Երեխաների միության համար, այսօր էլ բերում է արևի շողերի և մխիթարության զգացումները: Ո՞րն է ձեր սիրած սուրբ գրությունը:

* 3 Նեփի 15.9:

ՖՈՏՈՄՈՆՏԱԺ՝ ՇՈՒՄԱՆՈՒՄ